

## ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

«Ի»-ի ԵՒ «Վ»-ի ՏԵԽՆԻԿԱՆ

Տարւոյս յունուար ամսից Թիֆլիսում սկսուեց հրատարակուել մի նոր ամսագիր «Սրօր» անունով, որի մէջ պ. Ս. Մախասեանցը մի առաջարկ է անում՝ «Թողնել «ու»-ի հին գործածութեան ձևը, չհետեւել «ւ»-ի նորամուտ գործածութեան ձևին, այլ երկուսի փոխարէն գործ դնել «վ» տառը անխտիր ամեն տեղ, բացի այն տեղերից, ուր «ւ» տառը անհրաժեշտ է ու և իւ հնչիւնը պահպանելու համար:

Այդ նոր ուղղագրութեամբ «ւ»-ը գրուում է «եվ», «տիւ»-ը գրուում է «տիվ», «տեսաւ»-ը «տեսավ», «բաւական»-ը՝ «բավական» և այլն: Ուրեմն բառերի կազմութեան ձևը հիմնովին փոխուում է: Բայց դորա մասին չէ որ մենք ուզում ենք խօսել այստեղ: Մենք կկամենայինք ընթերցողի ու բանասէրի ուշադրութիւնը հրաւիրել մի հանգամանքի վրայ, որի մասին զօսցէ չէ մտածել նոր ուղղագրութեան հեղինակը և որ, ըստ մեզ, պակաս էական նշանակութիւն չունի գրելու տեսակէտից:

Յայտնի է, որ ներկայ դարի դիտութեան նպատակն է մարդկային կենցաղավարութեան ամեն խոչընդոտները և առաւպարները հարթել և դիւրացնել որքան կարելի է շատ. կեանքի ամեն ասպարէզներում այդ ուղղութիւնը գերիշխող դեր է ստանձնել. Ֆիզիքական ոյժին և ձեռքի աշխատանքին փոխարինում է մեքենական աշխատանքը. այս բոլորը նորա համար, որպէսզի մարդկային յօրինուածքը, որ առանց այն էլ մեծ չափով մտաւոր և ֆիզիքական սպառում ունի, ինչքան կարելի է քիչ եռանդ, էներգիա վատնէ և աւելորդ աշխատանքների չափը կարճէ:

Դրութիւնն էլ ֆիզիքական աշխատանքների թուին է պատկանում և այն էլ բաւականին ոյժ սպառող աշխատանքի: Մեր

տառերի գրելու էւօլիւցիան ինքնին արդէն ապացոյց է, որ ժողովուրդը հետգրեալէ աշխատել է թեթեւացնել գրելու եղանակը, աւելորդ աշխատանքը կարճել և գրող մարդուն ազատել գրութեան տաժանակիր աշխատանք պահանջող ոճից ու ձևից: Երկաթագիրը, այնուհետև՝ աւելի հեշտ գրուող բոլորգիրը, ապա աւելի պարզ ձևը՝ նօտրգիրը, և ՚ի վերջոյ ժԹ. դարում ամերիկեան գրութեան մետօդը, որի տարածման վրայ այնքան աշխատեց հանգ. բանասէր Մ. Միանսարեանցը, այս բոլորը միայն մի բան են ապացուցանում, որ մարդկութիւնը աշխատել է դեռ հնում թեթեւացնել մարմնի ֆիզիքական աշխատանքը և աւելի քիչ չարչարանքով ձեռք բերել ցանկացած գրքերը:

Բայց մարդկութիւնը ի. դարում աւելի ևս առաջ գնաց այդ ասպարիզում. նա աշխատեց նոյն իսկ բոլորովին ազատել ձեռքը գրելու աշխատանքից և նորան տալ մեքենական գործունէութիւն, շատ փոքր մաս թողնելով ձեռքին, նեալ դերին և մկաններին: Այդ նպատակով հնարուեց սղագրութիւնը, որ մարդ թէ արագ խօսողի գրածը կարողանայ արձանագրել և թէ միւլենոյն ժամանակ խնայէ մարդուս մկանների ու շղերի շտա գրելուց առաջացրած լաճախակի կծկումներն ու ցնցումները, որոնք վերջի վերջոյ իրանց ծանր ազդեցութիւնն են անում մարդու սրտի և ուղեղի վրայ:

Այս ուղղութեամբ են մտածում և գործում շատերը և աշխատում նորանոր դիւրութիւններ յարմարացնել թէ գրելու արհեստի և թէ նոյն իսկ տպագրութեան մէջ: Մինչև անգամ մտածողներ կան, որ տպած գիրն էլ որքան հնար է սղուի և այնքան ճապող տեղ չբռնէ, ինչպէս որ այժմ է, որով թեթեւութիւն լինի ինչպէս աչքի և ձեռքի, այնպէս էլ խնայողութիւն տպագրական ծախքերի համար: Պ. Ս. Լիսիցեանի նախածեղծութեամբ մենք պատրաստեցինք մինչև անգամ մի տեսակ նշան ա տառի փոխարէն, որ երեք անգամ պակաս տեղ բռնելով տպած թղթի վրայ և երեք անգամ էլ պակաս էներգիա պահանջելով գրելու ժամանակ՝ մեծ թեթեւութիւն պիտի պատճառէ շարունակ գրողներին և առնասարակ գիրք տպողներին: Այդ նշանը ուղղահայեաց մի գիծ է (1)՝ ա-ի երեքգր-

ծիկներէից մէկը, որ նոյնպէս իւր պատմութիւնն ունի: Այդ նշանով դրուածքի եօթերորդ մասը պակասում է, ինչպէս ցոյց է տալիս այս օրինակը.

Դրան աւագանին վճռել էր գահ բարձրացնել ոչ թէ ատելի Յագկերտի զաւակներէից մէկին, այլ նորա հեռաւոր ազգականներից ընտրել թագաւոր:

Դրն ւագնին վճռել էր գահ բարձրացնել ոչ թէ ատելի Յագկերտի զուկներից մէկին, այլ հեռաւոր իզգականներից ընտրել թագաւոր:

Մենք չենք ասում թէ այս նորածեղութիւնը անշուշտ կ'ընդունուի ամեն զրագէտների կողմից, բայց, լիշատակելով այս հանգամանքը, ցանկացանք ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրել այն բանի վերայ, որ տեխնիքական լարմարութիւնները մեր զրագէտները թողել են վերջին պլանի վերայ և նորանոր դրժուարութիւններ են ստեղծում, փոխանակ միշտ դէպի թեթեւը, տանելին և պարզը առաջնորդելու:

Այժմ ասենք, թէ ինչու մենք գտնում ենք, որ Ս. Մալխասեանի առաջարկը մեր լիշած դրութեան հակապատկերն է ներկայացնում և փոխանակ պարզելու մեր դրութեան ձևը՝ աւելի դժուարացնում է այն:

Յայտնի է, որ մատնիքի ժայրերում գտնուում են նեարդալին մագածե թելեր, որոնց միջոցով և կից մկաններով կատարուում է ամեն մի շարժում զրելու ժամանակ. այդ շարժողութիւնները հաղորդուում են ուղեղին և ազդում են նաև սրտի վերայ. որքան շատ անգամ շարժուին մատները, այնքան աւելի շուտ են լողնում նոքա: Ուրեմն ցանկալի է, որ այդ շարժումների թիւը որքան կարելի է քիչ լինի:

Յայտնի է նոյնպէս, որ և տառը զրելու համար մենք պէտք է երկու շարժում կատարենք, այն է՝ մի անգամ մէտեղից ներքև հիմնական դիժ անցկացնենք և մի անգամ էլ ներքևից վերև՝ նորա շարունակութիւնը կազմող մագային գիժը զրենք. իսկ վ տառը զրելու համար մենք այդ երկու փոքրիկ գծիկների վե-

ըսյ պէտքէ աւելացնենք դարձեալ երկու՝ և տառից ճիշտ երկու անգամ աւելի երկար գծեր\*), մէկը վերեւից մինչև ներքև՝ հիմնական գիծ անցկացնելու և մի անգամ էլ ներքևից վերև՝ մազաւոր գիծը գրելու: Ուրեմն և տառը զրեկը երեք անգամ պահաս աշխատանք է պահանջում՝ քան Վ տառը զրեկը: Եւ որովհետև զորուածքի մէջ ամենից շատ զորուածուող տառերից մէկը և տառն է, ապա ուրեմն ւ-ը վ-ի փոխելով՝ գրելու աշխատանքն էլ ըստ այնմ աւելանում է:

Մենք հաշուեցինք, որ 100 երեսանոց մի գրքի մէջ միջին թուով 4000 այնպիսի ւ կայ, որ, ըստ Մալխասեանի, վ-ի պէտք է փոխուի, ուրեմն 100 երես զրեկիս այդ նոր եղանակով պէտք է 8000 աւելորդ կրկնագիծ (հիմնական և մազաւոր) գրել, որ պահանջում է առնուադն 6 ժամ ժամանակ:

Ի՞նչ օգուտ պիտի ստանայ դրող մարդը ւ-ի տեղ վ զորուածեւորց՝ առ այժմ դեռ մուծն է այդ. իսկ բոլորովին պարզ է, որ նա այդ նորաթուիս մետօդով ամեն մի 100 երես զրեկու համար պիտի կորցնէ աւելորդ 6 ժամ ժամանակ և 8000 անգամ աւելի պիտի շարժուին նորա նետրդային հիւսուածներն ու մկանները, որ մարդկային էներգիայի միանգամայն աւելորդ կորուստ է:

Գիւտ ա. Բ. Ազաճեանց

\*) և գրուում է մէջ տեղի երկու տողերի մէջ, իսկ վ-ի հիմնական գիծը ամբողջ 4 տողերի վերայ, և նորա մազաւոր գիծը ներքև երկուի տողի վրայ. ուրեմն վ տառը իւր հասակով ճիշտ երկու անգամ մեծ է և տառից: